# ՄԵԾԱՐԱՆՑ ՈՐ ԵՒ Ս· ՅԱԿՈՎԲԱՅ ՎԱՆԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

*Մեծարանց սրբոյն Յակովբայ վանքը գտնվում է Արցախի Խաչեան գաւառում, Խաչենագետի հիւսիսային կողմը, երեք վերստ հեռաւորութեամբ գետից։*

*Այս վանքը «Մեծարանց» է կոչվում որովհետեւ Աղուանից մեծ մարդկանց — այն է կաթողիկոսաց — գամբարաններն ամփոփուած են այնտեղ. Իսկ սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետի սրբազան աջի այնտեղ պահուելու համար կոչուեցաւ եւ «Սրբոյն Յակովբայ վանք»։*

*Վարելով այս վանքում երեք տարի պաշտօն, որքան որ ոյժերս ներեցին, հաւաքեցի այնտեղ գտնուած բոլոր արձանագրութիւնները, ամենայն բարեխղճութեամբ. եւ այսօր յանձնում եմ հրատարակութեան։*

* * *

1. — *Հարաւային գաւթի հարաւարեւմտեան սիւնի վրայ, ներսից.*

*«Թագոր Ջալալայ դովլին հր*
*ամանով ես սմպատ որդի հեջբին տվ*
*ի էզատեղ գրիգորոյ նա ի տարումն: Դ:*
*ժամ երետ յայտնութեանն: Բ: ինձ: Բ: թա*
*մարին ով որ ժամն խափանէ կամ*
*զտեղն ի գրիգորոյ կամ յիւր յազգէ*
*ն հանէ:...թենէն: Գ: սբ ժողովոցն*
*նզոված է մեռելաւք ու կենդանեաւք երբ*
*թու...ց յիշատակն կտրելով չէցին*
*յէս եկեղեցոյս հանէ ԹԺԸ հայրապ*
*ետաց նզոված է»:*

*Այս արձանաքարը բաղկացած է երկու կտոր կարմրագոյն քարից. երկարութիւնն է մի արշին իսկ լայնութիւնը 14 վերշոկ։ Գրչութիւն՝ մեսրոպեան երկաթագիր. տողք՝ տասնեւկես. տողերը լայնութեան հաւասար, այն է 14 վերշոկ. երկարութիւն՝ իւրաքանչիւր տառը 5×3 սմ.։ Սոյն արձանագրութիւն թեր տուած պոկուած էր միջից 7×5 վերշոկ, հինգ տողի լայնութեամբ, եւ հողի մէջ գտնելով բաղդ ունեցայ լրիւ կարդալու (բացառութեամբ չորս թէ հինգ տառի որի կտորածը չճարուեց)։ Թուական չունի։*

digitised by A.R.A.R.@

2․ — *Սոյն գաւթի արեւմտեան դռնատեղի պատի վրայ․*

*«Ես զաքարէ որդ*
*ի վախտանգա տն*
*խաչինս ավի զխ*
*նձորխտա կոռ*
*երկիրն ի տունս*
*մեծարեանց*
*տր սարգիս եա մ*
*եզ։ Ժ։ աւր ժամ ի*
*տարում։ Ե։ ինձ*
*։ Ե։ ամուսնո*
*իմո արզու խա*
*թունին։ սրբո*
*խաչի տաւնին*
*որ զժամն խափ*
*անէ կամ զկոռ*
*երկիրն ի սբ նշա*
*նէս հանէ ՅԺԸ*
*հայրապետ*
*ացն նզովա*
*ծ է։ եւ մեր մեղ*
*ացս պարտակ*
*ան է։ կատարիչ*
*գրոյս աւրհնվծ է»։*

*Սոյն արձանագրութիւնը բաղկացած է երեք կտոր դեղնագոյն քարերից․ երկարութիւնն է 2 արշին 4 վերշոկ իսկ լայնութիւն իննեւկէս վերշոկ․ գրչութիւն՝ երկաթագիր․ տողք 23․ լայնութիւն՝ հաւասար․ տառերը 3×6 սմ․ ։*

3․ — *Գաւթի հիւսիսային պատի հիւսիս-արեւմտեան կողմի կամարի ներսի պատի վրայ․*

*«Կամաւն այ ես օքան*
*ու պապքան որդի սարգսի*
*հոգո որդոյն միաբան*
*եցաք սբ նշանիս ընծայիւք*
*իշխանութեան ջալալա տաւլին*
*տր։ վդ։ եւ միաբանքս։ Ժ։ ժամ*
*ավին մեր եղբաւրն մե*
*րչո մեծի։ Ե։ չաբաթ*
*ի ով խափանէ դատ*
*ի այ։ թվ։ Զ։ Ա»։*

digitised by A.R.A.R.@

*Արձանագրութեան քարը կարմիր է եւ գրութիւնից քիչ թեր ածուած․ մեծութիւնն է մի արշին երկար իսկ լայնութիւնը 10 վերշոկ։ Երկաթագիր տառք 6×3 սմ․ ։ Տողք 10․ լայնութիւն՝ հաւասար։*

4․ — *Գաւթի հիւսիսային պատի իսկ եկեղեցւոյ հարաւային դրան աջ կողքի ոռքի վրայ, ներսից․*

*«Ցիշխանութեան*
*Ջալալին ես խութ*
*լուքէկ որդի խոյտանա*
*միաբանեցա սբ ուխ*
*տիս ընծաիւք տր Ս․*
*եւ միաբանքս տվին*
*ի տարումն ։ Բ ։ աւր*
*ժամ ի տաւնի զատկ*
*ի ով խափանէ զ*
*ատի յայ ։ Թվ ։*
*։ ՉԽԲ ։»*

*Սա սպիտակ խաչաքար է , որի երկարութիւնը եւ լայնութիւնը* 11×11 *վերշոկ է․ գրութիւն՝ մանր երկաթագիր․ տողք՝* 11․ *տառք՝* 3×2 *սմ․ ։*

5․ — *Սոյն ոռքի դրսի կողմը․*

*«Ես ուզուլ*
*միչս միաբանե*
*ցա սբ նշան*
*իս տր Ս․ եւ մի*
*աբանքս ։ Գ ։ ժամ*
*տվին վարդ*
*եվառին ո*
*վ խափանէ*
*զատի յայ*
*Թվ ։ ՉԽԲ ։»*

*Այս կողմը քարի երկարութիւնը նոյն է իսկ լայնութիւնը* 5 *վերշոկ․ գրչութիւնը նմանապէս երկաթագիր է․ տողք՝* 10․ *տառերը՝ նոյն մեծութեամբ ։*

6․—*Սրան կից, գաւթի հիւսիսային պատի միջի կապոյտ քարի վրայ․*

*«Ես խոյդան աւշինայ ո*
*րդի միաբանեցայ սբ նշա*
*նիս ընծայիւք տր սգ․ եւ միաբան*
*քս տվին ինձ ի տարումն ։ Ա ։ աւր ժամ որ*
*չափ կենդանի եմ իմ հաւրն անեն երբ մեռ*

digitised by A.R.A.R.@

անիմ ինձ անեն ով խափանի դատի յայ
սբ գրիգորի տաւն անին զժամն»։

Այս անթուական եւ փակագիր արձանագրութիւնը գրուած է 7 վերշոկ բարձր եւ 15 վերշոկ լայն քարի վերա․ գրչութիւնն է նոյն ինչպէս վերեւինը․ տողք 17։

7․ — Գաւթի հիւսիսային պատի հիւսիս-արեւելեան կողմում․

«Ես գրիգոր որդի սմպատա միաբան
եցա տանս մեծարիանց յառաջնորդ
ութեանս տր սարգսի եւ տր վդ եւ տուի սբ նշ
ան եւ աւետարան եւ ։ Ա ։ կիսավար իւր հողոմն
ի մերրենիսն յիմ հայրենսա բաժնէն իմ հ
աւր տված վասուրսն ցհողն ջալալա դ
աւլին յիշխանութբ իմ հոգոյս ամի ։ Ի ։
ժամ ավին պատկին ով զհողն հանէ
ի սբ նշանէս կամ զժամն խափանէ
յայ եւ ։ Գ ։ սբ ժողովոյն նզովա
ծ է եւ յուդաի մասնակից է զհո
ղն անչար ով չար առու մե
ր մեղացն տր է ։ Թ ։ ՈՂ ։»

Այս արձանաքարը բաղկացած է չորս կտոր կարմիր քարից․ պատի մէջ յարմարացրած․ մեծութիւնն է՝ մի արշին երկուսեւկէս վերշոկ երկար եւ մի արշին լայն․ տողք՝ 13․ գրչութիւն՝ միսրոպեան երկաթագիր 3×5 սմ․։

8․ — Սոյն արձանագրութիւնից 11 վերշոկ ցածր ներքեւ, պատի մէջ ամրացրած է արձանաքարս, այս գրութեամբ․

«Կամաւն այ ես տր Յոհաննես
կթկս որդի ջալալին մեծ իշ
խանի կանկնեցի զխաչս ի
փրկութի հոգոյ իմոյ
որք երկիր պագեք աղ
աւթս յիշեցէք ։»

Քարը կարմրագոյն է․ մեծութիւնը՝ իննեւկէս վերշոկ երկար եւ 13 վերշոկ լայն․ տողք՝ 6․ տառք՝ 7×2 սմ․։ Սոյն արձանաքարի առաջ կանգնած է յիշեալ խաչքարը, գեղեցիկ քանդակներով, (միայն ափսոս որ այնքան մոմ են վառել քանդակների վրան որ է՛ որ սեւացել է եւ է՛ որ թեր է տուել այրուելուց)։ Խաչքարը ամրացրած է չեչքարեայ եռաստիճանի պատուանդանի վրայ եւ բարձրութիւնն է (պատուանդանի գլխից) մի արշին 10 վերշոկ, լայնութիւնը՝ գլխի կողմից՝ 15 վերշոկ եւ տակի կողմից՝ տասներկուսեւկէս վերշոկ․ իսկ հաստութիւնը՝ երեքեւկէս վերշոկ է։ Խաչքարի վրայի կիսեղծ թուականն է․ «Թվ. ՋԺԸ ։»

digitised by A.R.A.R.@

Ահա այս խաչքարի արեւմտեան կողմը թաղուած է ինքը խաչ կանգնող Յովհաննէս կաթողիկոսը, որի շիրիմը սպիտակ խազազաքարից կամ Շահբուլաղի քարից է, տափակաձեւ, եզերքը շղթայաձեւ քանդակներով. լայնութիւնն է 14 վերշոկ եւ երկարութիւնը 2 արշին 11 վերշոկ։

9. — Այս Յովհաննէս կաթողիկոսի շիրմին վրայ գրուած է.

«Այս է հանգիստ տր ովհ
անէս կթղս Աղվանից թվ ՋԺԹ»։ — 1470

Ինչպէս երեւում է, այս գաւթի յատակը սալարկուած է կաթողիկոսների շիրիմներով։ Յովհաննէս կաթողիկոսինը գաւթի հիւսիս-արեւելեան պատի տակ է։

10. — Այս Յովհաննէսից դէպի հարաւ, իրան հետ կից, կան երկու կապոյտ քարից անգիր շիրիմներ։ Իսկ դէպի արեւմուտք՝ երեք մի շարք եւ երեք մի շարք վեց շիրիմներ կան, նմանապէս կապոյտ քարից։

Յովհաննէս կաթողիկոսի շիրմին արեւմտեան կողմը եւ նրան կից, պատի տակի շիրմին վրայ գրուած է կիսաեղծ.

«Այս է Առըստակէս կթղկս»։

11. — Սրան կից, դէպի հարաւ գտնվող շիրմին վրայ.

«Սիմէոն կթղկս»։

Այս երկուսն էլ անթիւ են։ Իսկ մնացեալ վեցի վրայ ոչ թիւ կայ եւ ոչ էլ գրութիւն։

12. — Գաւթի հարաւ-արեւմտեան սիւների մէջտեղը կայ մի շիրիմ եւս, նոյնպէս կապոյտ քարից, որի վրայ քանդակուած է մի գաւազան եւ հետեւեալը.

«Այս է հանգիստ Սիմէոն կթղկս
թվ ՌԿԵ»։ — 1616

Սրա մեծութիւնն է 2 արշին 9 վերշոկ երկար եւ մի արշին լայն. իսկ հաստութիւնը 4 վերշոկ։ Համարեա բոլոր կապոյտ քարերը սոյն մեծութեամբ են։

Ուրեմն այս կաթողիկոսների շիրիմների կից շիրիմները եթէ ընդունինք որ բոլորն էլ կաթողիկոսների են, բացի սիւների արանքում թաղուած հինգ տապանաքարերը, ընդամենը 10 կաթողիկոսներ կան թաղուած Մեծարանց վանուց հարաւային գաւթում։

13. — Հարաւ-արեւելեան սիւների մէջտեղը կանգնած է մի մեծ կապոյտ խաչքար, որը կանգնել է վերոյիշեալ երկրորդ Սիմէոն կաթողիկոսը, դէմ առ դէմ Յովհաննէսի խաչքարին։ Այս խաչքարի բարձրութիւնն է 2 արշին 9 վերշոկ եւ լայնութիւնը մի արշին. հաստութիւնը վեցեւկէս վերշոկ։ Խաչքարը ձեւացնում է նախ մի մեծ խաչ քանդակած, գլխի կողմից մի զոյգ խաղողի ողկոյզներ կախած. խաչի տակ մի օձ, որի գլխին եւ պոչին մի մի փոքրիկ խաչեր քանդակած եւ տակը

digitised by A.R.A.R.@

«Թվ. ՌԿԳ.»։ Ներքեւը քանդակած մի զոյգ կամար, ներսը մի մի խաչ. սրանց տակ էլ՝

«Կամաւն այ ես տր
Սիմէոն կԹղկս մ
մեծծանիս կգն
ցի սբ խաչս փկու
Թե հոգոյ իմոյ
որք երկիրպագէք աղ
աւԹս յիշեցէք»։

Այս խաչքարը առանց պատուանդանի է եւ պատին Թեկն տուած կանգնեցրած։

14. — Գաւթի արեւելեան պատի հիւսիս-արեւելեան կողմի վերեւը գրուած է.

«Թւ. ՋԺԴ։ կամաւ ամենակալին
այ ես ազուքանս անարժան աղախ
ին Քի ամուսին հասանայ դուստր մե
ծ իշխանին էլիգումին պարոն մաւրն Թամոծի միարա
նեցա տանս մեծիրեանց ընծայիւք տր վդ
միաբանքն։ Գ։ սբ ժամ տվին յայտնուԹեանն
տն մերոյ Քի որչափ ես կենդանի եմ իմ մաւ
րն առնեն եւ յետ իմ անցման ինձ առնեն
որ զժամն խափանէ։ ԾԺԸ։ հայրապետաց
ն նզոված է կամ զԹեղ երկիր
սբ Նշանէս հանէ որ գնեց
ի»։

Սա բաղկացած է երկու կտոր կարմիր քարից. մեծուԹիւնն է 14 վերչոկ բարձր եւ իննեւկէս վերչոկ լայն. գրչուԹիւն՝ երկաԹագիր 2×4 սմ.։

15. — Սրա ներքեւ ուԹ վերշոկ պատի մէջ ամրացրած է մի խաչքար, որի գիրն է.

«Թ. ՌԿԱ.։ ես Նահատեղ
սակսաքա որդի կանգնեց խ
աչս։ ի տապանիս ի
մոյ յաղաւԹս յիշե
ցէք։»

ԲարձրուԹիւնն է մի արշին եւ լայնուԹիւնը 8-10 վերշոկ. Մի շատ գեղեցիկ քանդակներով խաչ է, կարմիր քարից. Տառերը վերինին նման են։

16. — Սոյն խաչից երկու վերշոկ ներքեւ դէպի հարաւ, այն է արեւելեան եկեղեցւոյ դրան կողքի վերին ռօքի գիրը.

digitised by A.R.A.R.@

«Կամաւն այ ես մաթիոս միա
բանեցայ սբ նշանիս
տր ազ․ միաբանքս ։ Ա ։ աւր ժ
ամ տվին յոմնաու տաւնի
ն կատարիչ գրիս աւրհնե
ալ եղիցի թվ․ ՉԻԱ ։»

Այս քարն սպիտակ չեչաքարից է․ մեծութիւնն է 8 վերշոկ բարձրութիւն եւ 10 վերշոկ լայնութիւն․ գրչութիւն երկաթագիր 4×2 սմ․ ։

Ոտքի հաստութիւնն է 4 վերշոկ եւ վրան գրուած է․

«Այս ե
երձար
աղազ
ի» ։

17․ — Ոտքի գիրը դէպի գաւիթը նայող երեսի վրայ․

«Ես զաքարէ որդի
վախտանգա տվ
ի գջաղացն մխ
իթարա հոգոյն
։ Զ ։ ժամ տը
ւաք ։ որ ի սբ նշ
անէս հանէ
ԹԺԸ հայրա
պետացն նզ
ոված է զհաս
ան յիշեցէք ։»

Այս արձանագրութիւնը երկու ոտքի վրան էր գրած, վերեւինը չորս տողից եւ ներքեւինը 7 տողից ։ Ներքեւինի մեծութիւնն է 9 վերշոկ բարձրութիւն եւ 8 վերշոկ լայնութիւն․ հաստոցն է վեցեւկէս վերշոկ ։ Իսկ վերեւինի մեծութիւնն է վեցեւկէս վերշոկ բարձր եւ 10 վերշոկ լայն․ հաստոցն էլ 7 վերշոկ, հետեւեալ գրութեամբ․

«Ժամս
սբ գի
որգա
տաւն
ին աւն
են» ։

Այս երկու ոտքերն էլ չեչաքարից են, միայն Ցովհաննէս կաթողիկոսն իւր խաչը կանգնելիս երեսները ծածկել էր սուաղով (= ծեփով) եւ իւր խաչն ամրացրել․ բայց ես զգուշութեամբ խաչի ոտքի քարուկիրը

digitised by A.R.A.R.@

*թափեցի եւ մեծ դժուարութեամբ կարդացի թէ՛ խաչի գրերը եւ թէ այս երեք չեչաքարէ ոջերի վրայինները։*

∴

*Այսքանս արեւելեան եկեղեցւոյ արեւմտեան պատի հիւսիս-արեւմտեան կողմի դրսի գրերն էին, յիշեալ գաւթի արեւելեան իսկ եկեղեցւոյ արեւմտեան կողմը։ Այժմ՝ եկեղեցւոյ արեւմտեան պատի հարաւ-արեւմտեան կողքի դրսի դէպի գաւիթը նայող՝ գրերը յիշենք։*

18. — *Դրան աջի կռան գիրը, ամէնից բարձրէն սկսելով.*

*«ՌԿԱ։ Թիւ։ ես խ*
*որիշահ։ ամուսին*
*վախտագա տր խաչ*
*ենոյ զուստր մեծին սա*
*րգսի քոյր զաքարի եւ իւան*
*ոյ վերըստին շինեցի զեկ*
*եղեցին մեծարանից*
*ի փրկութիւն հոգւոյ իմ*
*ոյ ի բարեխաւս զաւակ*
*աց իմոց։ Ա։ Խ. ժամ ինձ յիշ*
*ատակ իմ ծնաւղացն զվախտ*
*անգ եւ զիս յաղաւթս յիշեցէք։»*

*Այս գրութիւնը երկու կտոր կարմիր քարերի վրայ է, երկաթագիր* 4×3 *մմ.*։

19. — *Սրա տակը.*

*«Ես մուշեղ որդի հեջ*
*քին միաբանեցա սբ ուխ*
*տիս գնեցի զսբ Նշանս եւ*
*զՋեղիացան եւ տվ*
*ի վանքս։ տր ս. ին միաբա*
*նքս խոստացան ի*
*տարումն։ Բ։ ժամ*
*առաքելոց տաւն*
*ին ով խափանէ դատի*
*յայ։ Թվ։ ՉԽԲ։»*

*Սա եւս միեւնոյն քարից է։ Մեծութիւնն է՝ տասնեւմէկեւկէս վերշոկ բարձր եւ նոյնքան լայն. տառք՝* 3×2 *մմ.*։

20. — *Սրանից վեց վերշոկ ցածր, դրան աջ կողքի վրայ.*

*«Թիւ։ Զ։ Ջալալին հրամանաւ*
*ես վարհամ հասան որդիք*

digitised by A.R.A.R.@

սնպատա տվաք զծովատ
եղին հողն մեր հաւր հոգոյն
ի մեծերենց աթոռս որ վդ միաբանք
ս տվին ։ Գ ։ ժամ
վարդվառին ։ Ա ։
հասան ։ Ա ։ սնպ
ատ ։ Ա ։ Թամարի
ով զհողն հ
անէ ի տան
էս զժամն
խափանէ · Ց
ԺԸ · հայր
ապետացն
նզոված ։ »

Այս բոլորը գրուած է երեք ոտքի վրայ· վերինը կարմիր քար, հինգեւկէս վերշոկ բարձրութեամբ, իննեւկէս վերշոկ լայնութեամբ եւ 4 վերշոկ հաստութեամբ· իսկ երկրորդ ոտքը չեչաքար, 7 վերշոկ բարձր, նոյնքան լայն եւ վեցեւկէս վերշոկ հաստ· երրորդ ոտքն էլ նմանապէս չեչաքար, վեցեւկէս վ· բարձր, 6 վ· լայն եւ վեցեւկէս վ· հաստ ։ Գըր-չութիւն՝ երկաթագիր 4×2 սմ ։

21 · — Սրանց տակի կարմիր չեչոքի գիրը·

«Ես մուսես միաբանե
ցս սբ Նշանի ընծաիւք որ
վդ միաբանքս տվին տար·
Բ · աւր ժամ աւետեաց եւ ա
աւնին ով խափանէ նզոված·
Թ · · · · · · · »

Այս քարի մեծութիւնն է 7 վ· բարձր, 11 վ· լայն եւ 7 վ· հաստ ։

* * *

Այսքանս են գաւթի ներսի գրերը ։

Գաւթից դուրս, արեւելեան եկեղեցւոյ արեւմտեան պատի հարաւ-արեւմտեան կողմի ոտքը՝ գետնից երկու արշին 6 վ· բարձր է, որ ունի գրութիւն ։

22 · — Ինչպէս երեւում է, այս ոտքը հին կոտրած խաչքարի պատուանդան է եղած եւ նորոգութեան ժամանակ (ՈԿԱ = 1212 թուին) շարել են հարաւ-արեւմտեան որմի մէջ ։ Ահաւասիկ արձանագրութիւնը·

853 — «ՑԲ ։ Թուականութ
եան հայո ի ժամանակս

digitised by A.R.A.R.@

յովանիսի աղվան…
իշխանի ։ Ես սողոմ…
եծարանց եպիսկ…
կանգնեցի զս… ։»

Չեչաքարից սպիտակագոյն․ գրած երեսը տեղ տեղ սեւացած ։ Մեծութիւնն է 7 վ․ բարձր, 11 վ․ լայն եւ 5 վ․ հաստ․ երկաթագիր 4×2 սմ․ ։

23․ — Սրանից մէկնուկէս վ․ բարձր, նոյնտեսակ չեչաքարի վրայ, երեք տող խոշոր տառերով (7×3 սմ․) գրած է․

«ԱՋԻ
ԱՑ
։ ՋԸ ։»

24․ — Սոյն քարի հարաւային երեսի վրայ․

«Ես գրիգորիս գնեց
ի տանձուտին հողն եւ
ու ի տունս եւ տր սգ եւ
ին ։ Զ ։ ամ սբ ժամ յուԹորէ
քն որ խափանէ իմ մեղա
ցս պատասխանի տա այ ։»

Մեծութիւն՝ 8 վ․ բարձր, տասներկուսուկէս վ․ լայն եւ 4 վ․ հաստ ։ Այս հաստոցի վրայ գրած էր վերեւի «Աջի այ ։ ՋԸ ։» գրութիւնը ։ Գըրչութիւնն է նոյնպէս երկաթագիր բայց տառերի մեծութիւնը 4×3 սմ․ ։

Սոյն քարից երկուսուկէս վ․ բարձր, հարաւային պատի վրայ, կայ մի պատի ժամացոյց 14 վ․ լայնութեամբ եւ 8 վ․ բարձրութեամբ ։

25․ — Առաջին քարից 10 վ․ իսկ երկրորդից մի վ․ հեռի մի քարի վրայ, մասամբ եղծուած․

«Թվ․ ՈՂԹ․ էր ։
ես ստեփաննոս սարգիս եւ ներ
սէս փիլիսոփէի գնեցի զկալ?
ագկի հողն խահատին եռեւ ի տո
ւնս մեծիրանց տր վդ եւ միաբ
անքս տվին ինձ Բ․ ժամ ի տաւն
ի նոր կիրակին ով խափանէ կա
մ զգիրս ջնջէ աջի յայ
ու իմ մեղացս տէր ա» ։

Այս արձանագրութեան վրայ երկու ժամից աւել չարչարուեցայ եւ աստծու կարող ողորմութեամբը կարդացի ։ Գրուած է երկու կտոր քարի վրայ․ բարձրութիւնն է իննեւկէս վ․, լայնութիւնը տասներեքեւկէս վ․ եւ հաստոցը 6 վ․ ։

digitised by A.R.A.R.@

26․ — *Հիւսիսային եկեղեցւոյ արեւմտեան գաւթի հիւսիսային պատի հիւսիս-արեւելեան անկեան խաչքարի վրայ գրուած է, (որի երեսը դէպի հարաւ է նայում եւ պատի մէջ ամրացրած է)․*

*«Թիւ։ ՈՀԲ։ ես տր սարգիս կանգնեցի զխս*
*չս ի տապանի եղբաւր իմո տր Ցակովբ*
*ոսի արհի եպիսկոպոսի եւ մեծարանց*
*հայրապետի։ յաղաւթս յիշեցէք։»*

*Սրա բարձրութիւնն է 2 արշին 5 վերշոկ մինչեւ պատուանդանը․ լայնութիւնն է՝ գլխից մի արշին 4 վ․, իսկ տակից՝ մի արշին․ հաստոցն է 4 վ․։ Այս խաչքարը կարելի է ճարտարապետական հազուագիւտ գործերից մէկը համարել։ Կարծր կրաքարի վրան վարպետի երկաթէ գրիչը այնպէս խոր խոր ծրեր է քաշել եւ նուրբ քանդակներ ձեւացրել որ մարդ սքանչանում է եւ շատ նայելով չի կշտանում։ Հիանալի կաներգներ, եզրանկարներ եւ բազարջաձեւ նկարներ քանդակած են։*

27․ — *Այս գաւթի արեւելեան պատի վրա ամրացրած ուրիշ խաչքար․*

*«Թ։ ՈՀԴ։ Ես տր սարգիս*
*եղբաւր որդի տն գիորգա եղբա*
*յր տր յակովբոսի։ առաջնորդ տա*
*նս մեծարիանց կանգնեցի զխա*
*չս բարեխաւս մեզ առ ած»։*

*Սրա բարձրութիւնն է մի սաժէն 4 վերշոկ, լայնութիւնը մի արշին 2-6 վերշոկ եւ հաստոցը 5 վերշոկ։ Այս խաչքարի քանդակը նմանապէս վատ չէ բայց առաջինին չի հասնիլ։ Նիւթը կապտագոյն կրաքար է։*

28․ — *Սոյն գաւթի հիւսիսային պատի հիւսիս-արեւելեան կողմի կամարի տակ ամփոփուած է Վարդան արքեպիսկոպոսը, որի շիրիմը բաղկացած է չորս կտոր կարմիր քարից հետեւեալ գրութեամբ․*

*«Տր վարդան է տապանս*
*արհի եպիսկոպոսի»։*

*Եզերքը արխ արխ արած պարզ եւ անպաճոյճ մի շիրիմ է․ երկարութիւնը 2 արշին 10 վ․, լայնութիւնը 12 վ․ իսկ եզերքի արխերը 2 վ․ շրջապատ։ Տարերը 13×5։*

*Սրան կից կայ եւ մի ուրիշ տապան, անգիր եւ անթիւ։*

*Բացի այս, սոյն գաւթի մէջ կան 14 տապանաքարեր, հիւսիսից դէպի հարաւ շարած ու սալայատակած․ Թերեւս դրսից լինին բերած գաւթի սալի համար․ Իսկ չորս հատ տապան էլ կայ․ մինը վերեւ յիշած Վարդանինը, մինը նրա կողքինը, միւսը մեծ խաչաքարի առաջինը եւ էն մեծն էլ գաւթի մէջտեղը երկու կտորից։*

29․ — *Սոյն գաւթի արեւմտեան դրան գիրը, ձախ սնաթոռի վրայ․*

*«ի ՌՃԿԷ ԹՎԻՆ»։*

digitised by A.R.A.R.@

իսկ սրանից 14 վերշոկ ցած, դռնակողքի ներսի գիրն է.

«Կամաւն այ
ես մահու
եսի յարու
թիւնս նոր
ոգեցի զօք եկ
եղեցոյս երկու
զուռն յչտկ ինձ
եւ ծնողացն իմ»։

Երկուքն էլ կարմիր քարի վրայ։

30. — Սրանից մի քար բարձր, դէպի արեւմուտք նայող սօքի մը ,

«Ով ո
ք կար
դաք
ողոր
մի ա
սէք»։

31. — Սրա տակ, ներքեւը.

«Նա յ
արո
ւթի
ն կր
եցի
չափ»։

32. — Արեւմտեան գաւթի արեւմտեան դրան առաջ թաղուած է վանուց միաբան եւ վանահայր Մելքիսեդեկ վարդապետը, որի տա-պանի գիրն է.

«Այս է տապան մելքիսեդեկ վարդապետին
որ էր որդի աղասարեանց սարգիս բէկին
սա միաբան էր յակովբայ սրբոյ վանքին
բարի կրօնիւք քառսն եւ հինգ ամս լիովին
վախճանեցաւ 18 սեպտեմբերի 1830 ամին։»

33. — Սրա կից մի կրաքարի վրայ.

«Տապան տէր գասպարին եւ տէր
գասպարեանց սա էր միաբան
սրբոյն յակոբայ վանսն»։

Գերեզմանի վրայ նկարած են մի գաւազան եւ մի փոքրիկ Թաս ջուրով։

34. — Քամալեան վարդապետի շինել տուած պարսպի մէջ իբր շի-նութեան քար գործածուած էր հետեւեալ արձանագրութեան քարը.

digitised by A.R.A.R.@

«Կամաւն այ ես տր տղա...
այ արհեպիսկոպոս որդի մե[ծի]
աղպուղին գնեցի ա...
չփ տեղս այս սահման...
ի ծարաւաջրին ձո[րն]
գնաց վէր մարկոսա...»։

Այս քարը այժմ դրել եմ հարաւային գաւթի արեւմտեան պատի տակ։ Քարի բարձրութիւնն է 10 վ., լայնութիւնը տասնեւկէս վ. եւ հաստոցը 3 վ.։

35. — Այս մի արձանագրութիւնն էլ գտել եմ եկեղեցիների տանիքը մացառից ազատելու եւ մաքրելու ժամանակ, որ կտուրի պատին իբր սօք գործածուած է.

«Կամավ այ ես առաքել մխ
իթար բարգոժան երեց միաբ
անեցաք տանս մեծարանց տր
վդ եւ միաբանքս....»

երկու տող կոտրած եւ անընթեռնլի։

Քարի մեծութիւնն է 10 վ. լայն, 8 վ. բարձր եւ 2 վ. հաստ։

Բացի այս, գտնուեցան եւ մի քանի կտոր ուրիշ արձանագրութիւններ միայն կիսատ պռատ, ոչ մի օգուտ չեն կարող բերել պատմութեան։ Իսկ մի կամարի քարի կէսի վրայ խոշոր տառերով-գրած ՑԻՇԽԱՆՈ...» բառը կար միայն։ Այս քարն էլ խցերի պատերի մէջ գտի, հասարակ քարի տեղ գործածուած։

Խ. Ծ. Վ. ԴԱՏԵԱՆ

Ի Ջուարթնոց մայր եկեղեցի.